Թիվ 15179774 կատարողական վարույթով գնային առաջարկ

2026-11-26 11:18:44

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 4-րդ մաս

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից 20 մայիսի 2026թ. տրված թիվ 1306-Ա կատարման ենթակա ակտի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնում 30.07.2026թ. հարուցվել է թիվ 15179774 կատարողական վարույթը։
Կատարողական վարույթով պետք է՝ Գագիկ Ժորայի Հովհաննիսյանից Պետ. բյուջեի օգտին բռնագանձել 2.600.000 ՀՀ դրամ, ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար։
Կատարողական վարույթի շրջանակում արգելադրվել է Գագիկ Ժորայի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ Մրգաշատ գյուղ վկայականի համար՝ 13112012-04-0285 անշարժ գույքը, որը ենթակա է հարկադիր իրացման։
Տեղեկացնում ենք, որ
«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)
2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին։
Որպես տվյալ գույքի սեփականատեր տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության (համապատասխան ստորաբաժանման)

դեպոզիտ հաշվին։
Միջնորդության բացակայության պարագայում, ՀՀ Արմավիրի մարզ Մրգաշատ գյուղ վկայականի համար՝ 13112012-04-0285 անշարժ գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի՝ 2.274.625 ՀՀ դրամի 80%-ի չափով, որը կազմում է 1.819.700 ՀՀ դրամ։

15179774.pdf

37460713514

armavir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա